եւ յուղղափառ վարդապետաց հաւաքեալ„: Իսկ մէջտեղերը սա գրուած կայ տարբեր գրով. "Զվերջին ստացող սուրբ գրքիս որ կոչի ոսկէփորիկ, յիշեցէք զպետրոս որ է որդի . . . . (անընթեռնլի) . . . աց տաճկաց որ գերի էր վասն իւր եւ իւր ծնաւղաց հոգւոյն Աստուած ողորմի ասացէք ամէն, հայր:„ Անյայտ է թէ ո՞ր թուականին գրուած է:

Զ. Քարողագիրք 632 երեսէ բաղկացեալ, վերջէն մէկ կամ երկու թուղթ պակաս է, ոչ թուական ունի եւ ոչ յիշատակարան: "Զգործս ձեռաց մերոց„ եւայլն սաղմոսն ըսելով կը սկսի. "Առաջին քարոզն է պէնտէկոստէին, հոգւոյն սրբոյ գալստեան ի վերայ բանին յօհ. ժգ. գլխ. 14 համարն, ուր ասէ տէրն. Եթէ սիրէք զիս զպատուիրանս իմ պահեսջիք, եւ ես աղաչեցից զհայր եւ այլ մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցի ի յաւիտեան եւայլն„. եւ կը ճառէ այս բնաբանին վրայ երկարօրէն: Երկրորդ քարոզը սուրբ երրորդութեան վրայ է, վերջապէս պահոց, տօներու եւ շատ մը բաներու վրայ:

Մ. Տ.

---

# ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

---

## ԾԻԾՌՈՒՆՔ ԵՒ ՊԸՆԴՈՒԽՏ

*Օտար երկիր խեղճ գերի*
*Մարտիկ մը զող՝ կ'ըսէր ցաւով.*
*"Բարեւ ծիծռունք: Ցերկիր հեռի*
*Դուք կը փախչիք ձմեռնէն զով:*
*Ծիծռունք սիրուն, ես անհամբեր*
*Ձեր կը դիտեմ տարմից հօրան.*
*Միթ՞էք հիքիս ատեսաքեր:*
*Դիտեմ անցուցեր դուք էք տեսած*
*Իմ հայրենիքս, իմ որրան.*
*Ծիծռունք, թըշուառ հէք պանդուխտս*
*Զուանի՞ք արդեօք մի աւետիս*
*Ցիմ սիրուն հայրենեաց:*

*Երեք տարի կը խնդրեմ միշտ*
*Որ այն ձորէն մէն հան լուր տար,*
*Ուր դեռ մանուկ՝ օրեր անվիշտ*
*Կ'երագէի ես անդադար:*
*Հոն, ուր առու մ'արծաթագոյն*
*Կը կարկաչէ ջրատակաչուր,*
*Ուր չեփորուն քուրէ այգուն,*
*Հոն դուք տեսաք իմ պարզ խըղճիկ:*
*Չէք պանդխտիս չէք տար մի լուր*
*Այն ձորէն խաղաղիկ:*

*Թերեւս ձեզմէ մին հոն ծընաւ,*
*Ուր ես, ծիծռունք, եկայ յաշխարհ.*
*Ուրախ իմ մայրս տեսա՞ք քընաւ,*
*Տեսա՞ք մի օր զինքն անաշխար:*
*Երբ իւր եկան ժամեր յետին,*
*Ո՞չ ապաքէն ամէն վայրկեան*
*Կարծէր լսել ոտքիս քայլեր.*
*Երբ անկեղծ չէր տակաւին,*
*Կուլար, կ'ողբար եւ կ'այցայէր:*
*Ինչո՞ւ ծիծռունք կեցաք անձայն.*
*Չէք պատմեր ինձ իւր սէր:*

*Տեսաք քըրոջս իմ հարսանիք,*
*Տեսա՞ք կոչնոց ուրախ խըմբեր,*
*Կամ ցընծայից մեր պատանիք,*
*Իրենց երգոց կամ ակըմբեր:*
*Հայրենական մարտիկներ զոռ,*
*Մարտավարին ազնիւ ընկերքս,*
*Միթէ տեսա՞ն մեր գիւղաձոր:*
*Ինչո՞ւ ծիծռունք չէք բերեր լուր.*
*Բարեկամներս են արդեօք ո՛ւր.*
*Ա՛խ, արտի խոր է վէրքս:*

*Գուցէ շիրիմք իրենց եղան*
*Կոխան ոտից անցաւորաց.*
*Գուցէ յիմ տան օտարք գեղան,*
*Եւ թըշնամին քեզ անմոռաց*
*Նսեմացուց օրն երջանիկ:*
*Ես կորուսած մայր մ'աղէկէզ,*
*Շղթաներուն հիւծիմ ներքեւ:*
*Տեսա՞ք քաղցրիկ իմ հայրենիք,*
*Ծիծռունք, ընկերքս արագաթեւ,*
*Չէք տար լուր իմ ձորակէս:*

J. P. de Béranger. Թրգմ. Ց. Տ.

---

# ՔԱՐՈԶԱԿԱՆ

---

# ԽԱՉ ՈՒ ԾԵՓԻՉ

---

## ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷՆ ՎԷՊ ՄԸ

(Շարունակութիւն եւ վերջ)

20. *Ցատ ոչ:*

Պաշտօնեաներն մինչեւ գիշեր հոս սպասելէն ետքը՝ պահանորդ մը կեցուցին, որ գաւհերիցուն տնէն ելլելն իմացընէ: Իսկ իրենք սրճանոց մը մտան, եւ այլեւայլ սեղաններու քով նստան: Բայց սպասուած լրբերն նոյն իրիկուն չեկաւ:

Տէրութեան պալատին դիմացը՝ Մայր եկեղեցին շինուած է. երկրորդ օրն Ցիսուսի Ս. Սրտին տօնն էր: Եկեղեցական պաշտամունք առաւօտ կանուխ սկսան եւ իրիկունն վերջացան: Պաշտօնեաներն գաւհերիցուն կրօնական հոգին կը ճանչնային. գիտէին որ Քիզոյի ժողովրդեան կրօնական կենաց անձամբ մասնակից կ'ըլլար: Գիտէին միանգամայն որ Ցիսուսի Սրտին ընկերութեան անդամ գրուած էր, ուստի եւ աղօթքի ժամը պիտի չանցընէր: Զքրիստոնեայս աղօթքի հրաւիրող զանգակն, զպաշտօնեաներն ալ դարձեալ իրենց դարանը հրաւիրեց:

Այս անգամ ուշ եկան: Գաւհերէցն արդէն եկեղեցի մտած էր: Կարսիա Մորենոյ մեծ տօնի օրերն կը հաղորդուէր, եւ նոյն օրն ուրիշ հաւատացեալներէն կանուխ եկած էր:

Գաւհերէցն եկեղեցիէն ելած տունը Գամբուզանա եւ Գոռնէյոյ հրապարակի վրայ էին: Սակայն գաւհերիցուն վրայ յարձակելու չհամարձա-